


ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ

977



ԾՈՒՅԼ ՏՂԱՆ

ՀԱՅԳԵՏՐԱՏ

ԿԿ ԿԻՅ ՍԱՆԿԱԳԱՏ. ԳՐԱԿԱՆ. ԲԱԺԻՆ

1940



891.995
տ-26

891.994
S-26

13328

Арм.
2-5760a

2011-07

ԾՈՒՅԼ ՏՂԱՆ

(Հեյար)

Մի ծուլ ու անպետք տղա՝ ամեն որ փող է ուզում հորիցը և առածը տանում իր նման անպետքների հետ ծախսում:

Հայրը շատ է բարկանում վորդու վրա և սկսում է խրատել:

— Վորդի, դառը քրտինքով աշխատած փողն ինչո՞ւ լես տանում ջուրը գցում:

Վորդին չի լսում ու, ամեն որ, աղաչանքով ու սպանալիքով փողն առնում, գնում իր համար թափառում, ծախսում և ուշ գիշերին վերադառնում սուռն:

Մեր հայրն սկսում է մտածել ու տանջվել: Մտածում է, թե ինչ անի, վոր կարողանա իր ծուլ ու անպետք տղային խելքի բերի, վճռում է այլևս փող չտա, և միաժամանակ հարեաններին պատվիրում, վոր լեթե իր վորդին մեկն ու մեկից փող ուզի՝ վոչ վոք չտա:

— Հնվ, —ասում են հարեանները. — չես ուզում, չենք տա:

Առավոտյան, լույսը բացվում է թե չե, տրզան կանգնում է վոտի ու հորն ասում.

— Հայրիկ, փող տուր, գնում եմ:



ՄԻԲ. № 15058

— Չունենի՛ն Ուր ուզում ես՝ գնա: Հերիք է, տունըս քանդեցիր:

— Ուրեմն չես տալիս, ելի,

— Ձե՛,—վճռական ասում է հայրը:

Տղան, ձեռը դատարկ, տնից դուրս գալիս՝ մտածում է, թե ի՞նչ անի, վոր կարողանա այստեղ համար վող ճարի, գլխի յե ընկնում, և շտապում այս հարևանի, այն հարևանի մոտ, ու իր հոր անունով վող ուզում: Հարևանները կտրականապես մերժում են:


— Թե ուզում ես վող ունենալ, գնա՛ քեզ համար աշխատիր, — ու ճանապարհ են դնում նրան:

Ճանապարհին տղան մտածում է՝ վոչ հայրս է վող տալիս, վոչ հարևանները. ի՞նչ անեմ, ուր գնամ. ի՞նչ ասեմ իմ ընկերներին:

Ու այստեղ, դժվարութեամբ, վճռում է — գնալ աշխատանքի: Կնում տեսնում է, վոր անա ամառվա շողին, մարդիկ շենք են կառուցում, — քար են տաշում, պատ են շարում: Խնդրում է վարպետին, ընկերանում է սրանց, ու աշխատում է քրանքի և փոշու մեջ կորած: Յերեկոյան, իր աշխատագինն առնում, գալիս է տուն:

— Հը՛, ասում է հայրը, — վո՞նց ես:

— Հավ եմ, — պատասխանում է վորդին:



39963-67


— Դե, վորդիս, տար փողերըդ սրան-նրան
տուր, ընչի՞դ ե պետք...

Տղան թե՛

— Ե՛ր վո՛նց... Ամբողջ որը հողիս դուրս չե-
կավ քար ու շաղախ կրելով, ու հիմի տանեմ
աշխատածս սրան-նրան տամ, ես չեմ գժվել:

— Հա՛ն, դե իմացիր, — մարդիկ առանց աշ-
խատանքի վոչխոջ ձեռք բերել չեն կարող: Տես-
նում եմ, վոր խելոքացել ես, իմանում ես աշ-
խատանքի հարգը: Սրանից դենը խելքդ պիտի
պահիր ու ձեռք մի քաշի արդար աշխատանքից:

Այդ որվանից ծուլ ու անպետք տղան խե-
լոքանում ե, աշխատածը պահում այնպես, ինչ-
պես աչքի լույսն են պահում, ու դառնում քո-
լորի սիրելին:



« Ազգային գրադարան



NL0409267

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

13328

Ն Կ ար Ե ր ք
ԱՆ. ՄԵԻԹԱՐՅԱՆԻ

Պատ. խմբադիր՝ Ա. Սարգսյան
Հիտո-նկարիչ՝ Ան. Մխիթարյան
Տեխ. խմբադիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

С. ТАРОНЦИ
ЛЕНТЯЙ

Гиз Арм. ССР, Ереван, 1940

11 1940
228
1940 թ.

Գլխավոր լրագրող Զ—1055. Հրատ. 5153.

Պատվեր 102. Տիրաժ 5000

Հայտեաներատի 1 տպարան, Յերևան, Լենինի, 65.